

ԶԱՏԻԿ ԱԲԵՂԱ ԱՎԵՏԻՔՅԱՆ

ԱՐՎԵՍՏԻ ՆՈՐ ԳՈՐԾԵՐ

Ամենայն Հայոց Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի նախաձեռնությամբ վերջին չորս տարիների ընթացքում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գեղարվեստական գործվածքների հավաքածուն համալրվեց հայկական արվեստում իր նախօրինակը չունեցող լայնածավալ երեք գոբելեններով (պատկերագորգ), որոնց նախօրինակ նկարների հեղինակն է գեղարվեստի ակադեմիկոս Գրիգոր Խանջյանը:

«Իշման տեսիլք», «Հայոց Այբուբեն» և «Վարդանանք»,—ահա այն հորինվածքները, որոնք ազգային-եկեղեցական ու հայրենասիրական մեծ թափ են հաղորդում յուրաքանչյուր դիտողին:

Հայոց պատմության ֆոնի վրա երեքն էլ իրենց արտահայտած թեմայով շաղկապված են միմյանց և մեկը մյուսի անմիջական շարունակությունն է կազմում: Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն ընդունվելուց հազիվ մեկ դար անցած, պահանջ զգացվեց սեփական գիր ու գրականության անհրաժեշտության: Եվ դրանից ընդամենը կես դար հետո հայ ժողովուրդը հերոսական և ի գին արյան ճակատամարտ տվեց Ավարայրում՝ իր հավատքի և մշակույթի անաղարտ պահպանման համար, և ապացուցեց աշխարհին, որ ինքն էլ ազգ է և ապրելու ու ստեղծագործելու իրավունք ունի:

Անդրադառնալով գոբելեններին, ներկայացնենք նրանցից առաջինը, որը կոչվում է «Իշման տեսիլք»:

Հորինվածքի վրա, աջ կողմում, ծնրադիր պատկերված է Ս. Գրիգոր Լուսավորիչը, իսկ ձախ վերնամասում՝ Քրիստոսը, որ հրեղեն մուրճը ձեռքին ցույց է տալիս Աստծո տաճարի կառուցման վայրը Վաղարշապատում: Կենտրոնի վերին մասում երկու հրեշտակներ շրջապատել են լույսի ճառագայթներով ողողված Սուրբ Հոգու խորհրդանիշ աղավնուն: Աջ և ձախ կողմերում, լեռների գեղեցիկ ֆոնի վրա, ըստ Ագաթանգեղոսի, պատկերված են՝ Լուսավորչի Իշման հրաշափառ տեսիլքը երգով փառաբանող հրեշտակների խմբերը: Բազմաձև այս հորինվածքը կարելի է եռաթև համարել, քանի որ նրա կենտրոնական մասը աջ և ձախ կողմերից ունի զարդային երկու թևեր, որոնց հիմքում ընկած են հայկական կենաց ծառեր՝ իրենց վրա կրելով «Ամենայն Հայոց Վազգէն Ա Հայրապետին» (ձախից), «Էջ Միածինն ի Հօրէ» (կենտրոնում) և «Ֆրանսայի հայոց եկեղեցիների կողմէ, ՌՆԻԶ» (աջից) արձանագրությունները:

Գոբելենի ոճը խիստ հայաշունչ է և

ԻԶՄԱՆ ՏԵՍԻԼՔ
(Գործ՝ Գրիգոր Խանջյանի)

ազդված է հայ մանրանկարչության մոտիվներից: Գեղանկարչական լուծումը հարթային է՝ հագեցված է ջերմ գույներով, որոնցում իշխում են հողային երանգները:

Քրիստոսի կերպարը մեր առջև հառնում է ոսկեգույնի և նարնջագույնի լուծումով, որի շնորհիվ այն հնչում է եթերային թեթևությամբ՝ տևապես մնալով ուշադրության կենտրոնում: Դրան ի հակադրություն, Ս. Գրիգոր Լուսավորչի կերպարի լուծումը կատարված է կապույտ և մանուշակագույն երանգներով, որոնք առավել ամուր, իրական կերպարային մեկնաբանում են հաղորդում նրան:

Գոբելենը գրավում է դիտողին իր գունեղությամբ, գեղանկարչական վարպետ լուծումներով: Այն այժմ տեղադրված է Նոր Վեհարանում, Հայոց Հայրապետի ընդունարան-աշխատասենյակի հյուսիսային պատին:

Գոբելեններից երկրորդը կոչվում է «Հայոց Այբուբեն», որի նյութը հայոց գրերի գյուտի փառաբանումն է: Այստեղ ևս փայլուն կերպով հանդես է եկել Խանջյան նկարչի երկարամյա ստեղծագործական վարպետությունը:

Մեղմ ու հանգիստ գույներով հորինվածքը մեզ մտովի տեղափոխում է Ե դար, դեպի այն ժամանակաշրջանը, երբ ստեղծվեցին հայոց գրերը՝ ճիշտ գնահատելու համար մեծ հաղթանակի անհրաժեշտությունն ու կարևորությունը: Այդ բոլորը հստակորեն կարդում ենք հոգևորականության, արքունական դասի և պարզ ժողովրդի դեմքերին: Յուրաքանչյուրը յուրովի է ուրախանում կատարված իրողության առջև: Եվ այդ յուրովի ուրախության մեջ դարձյալ նշմարելի է ժողովրդի մեկ ու միասնական կամքը:

Լայնածավալ հորինվածքի կենտրոնում կանգնած է հայ մշակույթի մեծ լուսավորիչ Ս. Մաշտոց վարդապետը, որի ձեռքում առաջին պլանի վրա երևում է հայոց նորաստեղծ Այբուբենը: Մաշտոցն այստեղ նույնպես հիշեցնում է, ինչպես իր վարքագիր Կորյունն է վկայում, Հին Ուխտի Մովսես մարգարեին՝ տասնաբանյա պատվիրանները ձեռքին, միայն այն տարբերությամբ, որ եթե Մովսեսն իջնում էր Սինա լեռից, ապա Մեսրոպ Մաշտոցը՝ աստվածաշնչական Արարատից:

Գրերի գյուտի փառաբանումը՝ հորինվածքում կերտվում է Արարատի փեշերին, իսկ Արարատը լուսավորված է ծիրանավառ արեգի ոսկե սկավառակով:

Մաշտոցի խորհրդավոր հայացքում կարդում ենք դարերի խորքից եկող և դեպի հավերժը գնացող մեր ժողովրդի մշակութային հարուստ ավանդները: Նա հավատացած է, որ իր ժողովրդի ապագան տևական է միմիայն այդ երեսունվեց տառերի՝ «երեսունվեց անխոնջ մարտիկների» հարամնա և կենդանի պայքարով:

Հորինվածքում ուրախ է նաև Հայոց Վեհափառ եռամեծ Սահակ կաթողիկոսը: Ուրախ է, որովհետև իր հոտն ու ժողովուրդը հետայսու սեփական մայրենի լեզվով պիտի կարդան Աստվածաշունչ մատյանը, որը հայ ազգի գոյատևման կռվաններից մեկն է հանդիսանում: Հայոց Վեհափառը մի ձեռքով «խաղաղութիւն» է տալիս իր ժողովրդին, իսկ մյուս ձեռքով ամուր բռնել է Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը, որի վրա մեծատառերով մակագրված է տիեզերքի Արարչի հետևյալ խոսքերը.

«Եղիցի լոյս և եղև լոյս»

Եվ իրապես հայոց գրերի ստեղծումը մեր ժողովրդի համար մի նոր «Եղիցի լոյս» հանդիսացավ:

Հորինվածքում, որպես կենտրոնական դեմք, տեղ է գրավել նաև Հայոց Վռամշապուհ արքան, որին համակել է գոհունակ հպարտությունը: Նա խորապես համոզված է, որ սեփական, ազգային մշակույթի կերտմամբ ու զարգացմամբ հզոր թափ կհաղորդվի նաև իր պետությանը, իր հողին, որ սրբություն է ամեն մի հայ մարդու համար:

Իրենց ուսուցչի փայլուն հաղթանակով հպարտ են նաև թարգմանիչ վարդապետները, որոնք իմաստավորեցին իրենց կյանքը՝ թողնելով մեր ազգային մշակույթի ընտիր երախայրիքը: Նրանք ծնրադիր շրջապատել են իրենց ուսուցչին և կարծեք արտատրոփ սպասում են մշակույթի և ստեղծարար աշխատանքի ի գործ անցնելու հրամանի:

Հորինվածքում խոսուն է նաև հայ պարմանուհու կերպարը: Նա իր կուսական գեղեցկությունը համեստության շղարշի տակ սքողած, ուռենու ոստը ձեռքին, հրեշտակների հետ մասին «օվսաննա» է երգում:

Փառաբանական և գոհաբանական աղոթք է մրմնջում նաև հայ ժողովուրդը՝ հանուն մեծ նվաճումի:

Մեսրոպ Մաշտոցի աջ կողմում, «առ ոտս նորա», ծունկի է եկել հայ մանուկը: Վերջինս, հանուն ողջ հայ մանուկների, անմեղ ու անկեղծ ուրախությամբ, ձեռքերը դեպի Հայոց Այբուբենը պարզած, լույս ու

լուսավորություն, գիր ու դպրություն է աղերսում: Ազգային բնազդը նրա մեջ արթնացրել է սեր դեպի մշակույթը, սեր դեպի գիտությունը:

Իսկ ձախ կողմում կանգնած է ապագային լավատեսությամբ նայող հայ աղջնակը, որը կուսական երկու ձեռքերով ամուր բռնել է խաղաղության աղավնին, խաղաղություն, որը ցանկալի ու թանկ է եղել մեր ժողովրդի համար բոլոր ժամանակներում, պատմության օրհասական ամեն մի պահի:

«Խաղաղություն թող միշտ լինի աշխարհում». այս է հայ աղջնակի հավատամքն ու աղերսը, որը նվիրական իղձբանաձևումն է նաև մեր օրերի համայն մարդկության:

Գոբելենի աջ և ձախ վերնամասերում կան երկու արձանագրություններ: Առաջինը Աստվածաշնչի «Առակաց» գրքի «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» հատվածն է, իսկ երկրորդը՝ Թարգմանչաց շարականի «Որք զարդարեցին տնօրինաբար զիմաստս անեղին» տողերը: Երկու հատվածներն էլ ամբողջացնում են հորինվածքի արտահայտած խորհուրդը:

Իսկ ներքևի մասում գրված է, որ այն Մայր Աթոռին են նվիրել փարիզաբնակ Սուրեն և Գուրգեն Գործունյան եղբայրները՝ ի հիշատակ իրենց հոր՝ Հայկ Գործունյանի:

Գոբելենն այժմ տեղադրված է Էջմիածնի Նոր Վեհարանի հանդիսությունների դահլիճի արևմտյան պատին:

Երրորդ հորինվածքը կոչվում է «Վարդանանք»: Այն պատմում է Ե դարում հայ ժողովրդի՝ պարսիկների դեմ մղած «Վասն Ցիսուսի և վասն Հայրենեաց» հերոսական պայքարի մասին:

Դյուցազնական այդ հերոսամարտը իրապես կարմիր տառերով արձանագրվեց մեր Եկեղեցու և ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հուշամատյանում: Այդ պատմական կարևորագույն դրվագը հպարտորեն մեզ է պատմում Ավարայրի մասնակից Եղիշե պատմիչը:

Նկարում պատկերված է այն պահը, երբ հայերը արդեն պարսից շրջապատման մեջ են:

Կենտրոնում հզոր ու անկոտրում կամքով, պայքարող տրամադրությամբ, ճերմակ ձիուն նստած, երևում է Մամիկոնյան Վարդան զորավարը: Հակառակ անելանելի դրության, նա չի ուզում հաշտվել պարտության գաղափարի հետ: Ուժերի լարման ամենահզոր կարողությամբ նա իր կոչն է արձակում ասելով. «Հայոց քաջեր, ի մարտ արյան արդար գնով»: Նրա համար անընդունելի է պարտությունը: Նույնիսկ մահվան մոտալուտ պահին նա ավելի մարտական է և շարունակում է ոգևորել իր զինակիցներին: Նա համաձայն է սեփական արյամբ հայրենակիցների ազատությունը ձեռք բերելուն, որի համար մեր ժողովուրդը սրբացրել է նրան ու փառքի պսակ դրել նրա ճակատին:

Հորինվածքում ցայտուն կերպով է արտահայտված հայ ազատատենչ կնոջ կերպարը: Նա սուրը և վահանը ձեռքին իջել է ռազմի դաշտ՝ տղամարդկանց հետ հավասար պայքարի մտնելու: Նրա համար ևս սրբազան պարտք է հայրենի հողի ազատագրումը: Այստեղ նա ներկայանում է ազգային ազատագրական պայքարներում հայ կնոջը հատուկ հերոսական կերպարով:

Խաչի փոխարեն սուրը ձեռքին, հոգևորականի ճերմակ պարեգոտով ռազմի դաշտ է իջել նաև հոգևոր դասի առաջնորդ Վանանդեցի Ղևոնդ Երեցը, նրա հետ նաև՝ վարդապետների ու քահանայից դասը: Հայրենասեր հոգևորականությունը քաջ գիտակցում է, որ այսօր արհամարհելով մահը «Գողգոթա» է բարձրանում, որպեսզի վաղը գալիք սերունդները գոհունակ սրտով տեսնեն հայ ժողովրդի «Պայծառակերպության Թաբոր լեռը»՝ հայրենի մեծ վերածնունդը:

Ղևոնդ Երեցի կերպարը խոսում է, ոգևորում և ներշնչում: Նրա շուրթերից մենք քաղում ենք հետևյալ իմաստուն խոսքերը՝ «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն»:

Նույն նշանաբանի վառ գիտակցությունը ցայտուն կերպով երևում է նաև մարտնչող ռազմիկների դեմքերին: Նրանք գիտակցում են, որ «Թերահաւատութիւնը վախկոտութեան է նշանակ»:

Ռազմի դաշտում կան նաև զոհեր ու վիրավորներ: Սակայն բոլորի դեմքերին էլ անխտիր դրոշմված է խոր հավատքը հաղթանակի և տենչը ազատության:

Պատկերի տարբեր հատվածներում սպարապետ Վարդան Մամիկոնյանի, Ղևոնդ Երեցի ու Եղիշե պատմիչի հետ հավասարապես մաքառում են Հայոց Մեծ Վեհափառ Խրիմյան Հայրիկն ու Կոմիտաս վարդապետը, զորավար Անդրանիկը, Դանիել Վարուժանն ու Եղիշե Չարենցը, Պարույր Սևակն ու Վիլյամ Սարոյանը, որոնք իրենց գրչով ու սրով ամրապնդեցին հայոց ազգի ինքնության սրբազան իրավունքը:

Իրար բախվող սրերն ու վահանները, արձակվող նետերն ու ճոճվող նիզակները մեզ տեղափոխում են կռվի դաշտ, դեպի

ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆ

(Գործ՝ Գրիգոր Խանջյանի)

Ավարայր: Դիտողին թվում է, թե լսում է սրերի շաչյունն ու նետերի սուլոցը, վահանների թնդյունն ու նիզակների շռինդը, մարտընչող ու վիրավոր մարտիկների ճիչն ու աղաղակը:

Հորինվածքի խորքում պատկերված են պարսկական բանակի զինվորները: Հազիվ կարելի է նշմարել նրանց դեմքերը, որովհետև նրանք ապշահար զարմանքով խոնարհել են իրենց գլուխները հայերի այն վճռականության առաջ, որ գերադասելի է մեռնել, քան ապրել անարգված:

Հիրավի, դժվար է լոկ բառերով ներկայացնել այն, ինչ ստեղծել է նկարիչ Գրիգոր Խանջյանը: Սահմանափակ ծավալի մեջ՝ հերոսական մի ամբողջ պատմություն, մի ժողովրդի դարերի հերոսական մաքառումների ամբողջական մի երթ՝ արտահայտված նրբին, զուսպ ու ներդաշնակ գույներով:

«Վարդանանք» նկարը շուտով կառաքվի Ֆրանսիայի Օբյուսոն քաղաք՝ իր երկրորդ և վերջնական կյանքը ստանալու համար:

Գոբելենը գործվելուց հետո որպես նվեր բերվելու է Մայր Աթոռ: Այն արտաբուխ նվերն է բելգիաբնակ տեր և տիկին Մելանգտոն և Վիոլետ Ասլանյանների:

Սույն թվականի հունիսի 11—29 օրերին քաղաքամայր Երևանի նկարչի տանը կազմակերպվել էր «Հայոց Այբուբեն» և «Վարդանանք» նկարների հանրադիտում: Հաջողությունը մեծ էր ու ոգևորիչ: Դրան լայնորեն արձագանքեցին հանրապետական մամուլն ու հեռուստատեսությունը: Այս առթիվ հանրապետության թերթերում հրատարակվեցին գովեստի ու գնահատանքի խոսքեր՝ «Հայրենաշունչ կտավներ», «Անշրջանակ լուսամուտներ», «Հերոսապատում», «Կերպարվեստի մի գլուխգործոց», «Իմաստուն տքնանքի արգասիքը» և այլ որակումներով:

Այդ առթիվ ահա թե ինչ հայտարարեց նաև ինքը՝ նկարիչ Գրիգոր Խանջյանը, «Հայոց Այբուբեն» և «Վարդանանք» աշխատանքների մասին.

ՀԵՂԻՆԱԿԻ ԽՈՍՔԸ

«Հայոց Այբուբեն» և «Վարդանանք» գոբելենների վրա աշխատել եմ շուրջ երեք տարի:

«Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն» խոսքերը, որ գրել է Ե դարի մեր Եղիշե պատմիչը, լրիվ արտահայտում են Վարդանանց պատերազմի և իմ ստեղծած պատկերի խորհուրդը: Ավելին՝ այդ խոսքերի իմաստը արդիական է հնչում նաև մեր ժամանակներում և հնչելու է գալիքի մեջ:

Ամեն մի վեհ գաղափարի համար մղվող պայքարի մեջ զոհվելը, նշանակում է գիտակցված մահ, որ երախտապարտ հետագա սերունդները անվանում են անմահություն:

Վարդանանց պատերազմը մեր ժողովրդի, մեր երկրի գոյատևման համար, հայոց այբուբենի ստեղծումից հետո, պետք է համարել ամենակարևոր, ամենանշանակալից երևույթը, սկիզբը մեր ազգային-ազատագրական պայքարների, որոնք իրենց էությամբ հաղթանակներ էին հայ ոգու և հայրենիքի գոյատևման:

Բանաստեղծ Վահագն Դավթյանը ճիշտ է բնորոշում «Վարդանանք» պատկերի նշանակությունը իր խոսքի մեջ, երբ ասում է, որ «հայ ժողովրդի բազմադարյան պատմությունը սկզբից մինչև մեր ոչ հեռավոր անցյալը մի համատարած ու անընդմեջ Ավարայր է եղել... Արյան Ավարայր, Գաղափարի ու Հավատի Ավարայր, մտքի ու ստեղծագործական թռիչքի Ավարայր...

Ավելի քան դժվար էր իմ աշխատանքը:

Հասնել Ե դարի կեսերը, փորձել համոզել, որ դա իրական դեպք է և ոչ թե լեգենդ, որ մարդիկ իրենց ժամանակին իրոք կարող էին այդպիսին լինել, ինչպես պատկերված է նկարում. այդպես հագնվել, այդպիսի զենք կրել, նման դրոշ ունենալ, յուրաքանչյուրի մեջ անհատականություն տեսնել, կենդանություն հաղորդել,—դյուրին չէր:

Այս բոլորի հաստատման համար ինձ պետք եղավ սուզվել պատմության մեջ, կատարել հետազոտողի դեր, հանել ճիշտ եզրակացություններ, փնտրել պատմիչների յուրաքանչյուր խոսքի իմաստը, մոտենալ մեր ժամանակներին, հասնել Տարոն ու Մուշ, ուսումնասիրել Սասանյան Պարսկաստանից մեզ հասած ազդեցությունները, ապա շատ բան հորինել՝ դիտողին համոզելու համար: Իսկ եթե այս ամենին ավելացնենք գոբելեն գործին հատուկ պայմանները՝ որոշակի հարթայնություն, սիմետրիա, կրկնվող գույներ, մանրամասների և ճոխության անհրաժեշտություն և այլն և այլն, ապա պարզ են դառնում և՛ դժվարությունները, և՛ աշխատանքի պատասխանատվությունը:

Եվ ո՞վ օգնեց ինձ հիմնականում: Ինքը՝ Եղիշեն, նրա հարուստ բանաստեղծական լեզուն՝ պատկերների կենդանությամբ, աչքի զարնող մանրամասների նկարագրու-

թյամբ. օրինակ՝ որ Վարդան Մամիկոնյանի ձին սպիտակ էր, թուրը՝ կարճ, որ բազմաթիվ սաղավարտներն ու զրահապատված զորականների զենքերը փայլում էին ինչպես արևի ճառագայթների շողեր: Նաև՝ որ բազմաթիվ սուսերների շողալուց և բազմախառն նիզակների ճոճվելուց կարծես ահագին կրակ էր թափվում երկնքից:

«Որովհետև ո՞վ կարող է պատմել ահավոր ձայների մեծ իրարանցումը և թե ինչպես վահանավորների թնդյունն ու աղեղների լարերի ճայթյունը առհասարակ խլացնում էին բոլորի ականջները», ահա այս և նման նկարագրությունները մեծապես օգնեցին ավելի հավաստի տեսնելու և պատկերելու մեծ մարտը: Պատկերի կոմպոզիցիայում հայերը պատկերված են եռանկյունու մեջ, և նրա ամեն անկյունը շեշտված է հերոսով. կենտրոնում Վարդան Մամիկոնյանն է, աջում՝ Ղևոնդ Երեցը, իսկ ձախում՝ աշխարհազորի ներկայացուցիչները:

Եռանկյունին շրջապատված է բոլոր կողմերից պարսից զինվորներով: Նրանք անհատականացված չեն, ընդհակառակը՝ մոտեցված են բութ զանգվածի: Գլխարկների ձևը հնարավորություն տվեց մոտենալու ֆաշիստական կասկաներին՝ դրանով իսկ շեշտելու յուրաքանչյուր բռնության մեջ ֆաշիզմի սկիզբը: Պատկերի մեջ հայերի կերպարները համոզիչ և հարուստ դարձնելու նպատակով որոշ դեմքեր, ոչ շատ նմանությամբ, մոտեցրել եմ մեր ազգի մեծ զավակներից ոմանց դեմքերին, ինչպիսիք են Խրիմյան Հայրիկը, զորավար Անդրանիկը, Դանիել Վարուժանը, Կոմիտաս վարդապետը, Չարենցը, Սարոյանը, Պարույր Սևակը և ուրիշներ՝ նպատակ ունենալով հաստատելու այն ճշմարտությունը, որ յուրաքանչյուր հայ, լինի նա ռազմական, քաղաքական կամ մշակութային գործիչ, եթե իր ավանդն է ներդրել մեր հայրենիքի գոյատևման, ազատության և առաջընթացի ճանապարհին, կարող է համարվել Վարդանանց պատերազմի մասնակից:

Մեր ժողովուրդը երկար դարեր մղել է գոյատևման պայքար և միայն Սարդարապատի հաղթանակից ու 1920 թվականի նոյեմբերից հետո բռնել է իր վերածննդի ճամփան: Մեր բազմազգ մեծ Միության եղբայրական միասնության մեջ այսօր նա կոփում է իր հաստատուն կյանքը, վեր հանում անցյալի փառավոր հիշատակները և արժեքավորում դրանք ու հարգանք մատուցում բոլոր նրանց, ովքեր կերտեցին մեր հերոսական պատմությունը, ովքեր զոհվեցին Հայաստանի համար՝ գոյատևելու և ազատ ապրելու տենչը հասցնելով մինչև մեր օրերը:

Այս առթիվ կցանկանայի հիշել Եղիշե պատմիչի՝ իր պատվիրատուին՝ Մամիկոնյան Դավիթ երեցին ուղղած խոսքը, թե՝ «Մենք քո հրամանի հետ ընդունելով հոժարությամբ սկսեցինք այս բանը, որ սիրելիների համար մխիթարություն է, հուսացողներին՝ հույս, քաջերին՝ քաջալերություն»:

Ցանկանում եմ երախտագիտության և շնորհակալության խոսք ուղղել Ամենայն Հայոց Հայրապետին՝ Վազգեն Ա-ին, որի հայրենասեր սրտին եմ պարտական այն վստահությունը, որ ինձ ընձեռվեց՝ դառնալու այս երկու գործերի հեղինակը:

Ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում բանաստեղծ Վահագն Դավթյանի «Անշրջանակ լուսամուտներ» գնահատականի խոսքը, որը տպագրվել է «Սովետական Հայաստան» թերթի 1981 թ. հունիսի 16-ի համարում:

ԱՆՇՐՋԱՆԱԿ ԼՈՒՍԱՄՈՒՏՆԵՐ

Գրիգոր Խանջյանի այս երկու վիթխարի նկարների մասին հավանաբար ոչ թե հոդված, այլ չափածո պիտի գրվեր, որովհետև նկարները երկար ու երկար դիտելուց հետո, երբ դուրս ես գալիս դահլիճից, էությանդ մեջ սկսում է արթնանալ ու հնչել ոգեղեն մի նվագ, որ հիմնի ու ներբողի է նման: Ողբերգական ու հերոսական է այդ նվագը, ցավագին է ու լուսավոր: Այրող զգացմունք է դա, այրող գաղափար ու արվեստի բարձր վայելք... Եվ դահլիճից շատ չհեռացած, զգում ես, որ այդ նվագը քեզ ետ է կանչում, գույներն են կանչում՝ կարմիրն ու կապույտը, կարմիրն ու դեղինը, կարմիրն ու ոսկին, կանչում է արվեստի շարունակվող վայելքը...

Ես արդեն մի քանի անգամ դիտել եմ այդ նկարները, բայց դահլիճը շարունակում է ինձ կանչել, ու կասկած չունեմ, նորից կգնամ, որովհետև ամեն դիտելուց ինքդ քեզ համար նորանոր գյուտեր ես անում, հայտնաբերում նոր շերտեր, մտքի ու զգացմունքի նոր խորքեր, նոր գեղեցկություններ:

Եվ ահա, երբ վերջին անգամ կանգնած էի այդ նկարների դեմ, մտքիս մեջ ակամա Սիամանթոյի տողը հնչեց.

Դուն՝ անշրջանակ լուսամուտ...

ՎԱՐԴԱՆԱՆՔ

(Գործ՝ Գրիգոր Խանջյանի)

Մեսրոպ Մաշտոցի մասին է այս մեծ ու տարողունակ տող-պատկերը, բայց ես այն հավասարապես վերագրում էի Գրիգոր Խանջյանի այս երկու նկարներին, որոնցից մեկը հենց Մեսրոպ Մաշտոցի մասին է և կոչվում է «Հայոց Այբուբեն», մյուսը նվիրված է Ավարայրի ճակատամարտին և կոչվում է «Վարդանանք»:

• Երկուսն էլ ոգեղեն նկարներ են: Ոգեղեն նկարը բացատրելն ու վերլուծելը նույնքան դժվար է, որքան ոգեղեն բանաստեղծությունը, ու երևի այդ պատճառով է, որ ես ակամա Սիամանթոյի տողը հիշեցի, փորձելով ինքս ինձ համար բանաստեղծական այդ տողով բնութագրել ու բացատրել նկարները:

Ես չգիտեմ, Գրիգոր Խանջյանը «Հայոց Այբուբենը» ստեղծելիս մտքի մեջ ունեցե՞լ է արդյոք Սիամանթոյի այդ տողը, բայց նկարն իսկապես մի անշրջանակ լուսամուտ է, քանի որ չես տեսնում նրա էությունից ճառագայթող լույսի սահմանները:

Նկարի մեջ այն պահն է, երբ տառերի գյուտն արդեն արված է, և գույների զարմանալի ներդաշնակության միջից նրա լուսավոր հրաշքն է ծավալվում ու հընչում է գյուտի անքառ փառաբանությունը... Գյուտ, որի խորհուրդն անընդգրկելի է հայոց պտմության, մեր ներկայի ու ապագայի համար: Եվ նկարի դեմ կանգնած, մտքիս մեջ դարձյալ ու դարձյալ Սիամանթոյի տողերն էին հոլովվում.

Եվ լսե՛ այսօր, թոթովախոս ծաղկոցի
Շուշան-մարմին մանուկներեն
Մինչև ծերերն հողաբույր,
Քու սուրբ անունդ օրհներգեն...

Նկարի ոսկեվուն, կապտավուն, արշալույսային գույների մեջ իսկապես և՛ հողաբույր ծերեր են, և՛ շուշան-մարմին մանուկներ, որոնցից մեկը՝ Մաշտոցի ոտքերի մոտ ծունկի եկած, ասես լույս աղերսող հրեշտականման մանուկը, արվեստի կատարյալ հրաշք է: Անչափելի սեր, քընքշանք ու հավատ է դրել նկարիչն այդ կերպարի մեջ՝ այն դարձնելու կյանքի ու հարատևության խորհրդանիշ:

Գրիգոր Խանջյանի մյուս, առավել մեծ, առավել հզոր ու կորովի գործը Ավարայրի ճակատամարտն է՝ «Վարդանանքը», որ առաջինի գաղափարական ու տրամաբանական շարունակությունն է և գալիս է կրկնելու այն ճշմարտությունը, թե այն, ինչ գրչով նվաճեց Մեսրոպ Մաշտոցը, սրով հաստատեց Վարդան Մամիկոնյանը:

Սա արդեն բառի ոչ միայն փոխաբերական, այլև իսկական իմաստով մի «անշրջանակ լուսամուտ» է, անշրջանակ նկար, որովհետև երբ հեռվից ես նայում, թվում է, թե մարդկային ոգեշունչ կերպարների միակամ, միաձույլ ու մոլեգնած գունդը ոչ միայն նկարի շրջանակն է փշրել, այլ ուր որ է կփշրի նաև դահլիճի պատերը, կհորդի, կկրկնապատկվի, կբազմանա ու բազմանալով, անսահմանորեն կծավալվի...

Ոչ, նույնիսկ մի քանի անգամ դիտելով հնարավոր չէ թափանցել այս գործի գաղափարական ու գեղարվեստական հարուստ շերտերի մեջ, հնարավոր չէ այսպես տաք-տաք քիչ թե շատ դիպուկ ու ընդգրկող խոսք ասել նրա մասին: Բայց քանի որ ոգևորությունը ստիպեց ինձ գրիչ առնել ու խոսել, ապա թռուցիկ ու համառոտակի թվեմ իմ մի երկու ընկալումները միայն:

Իսկ իմ ընկալումներից առաջինն այն է, որ թեև նկարը կոչվում է «Վարդանանք», ու այնտեղ միայն Ավարայրի ճակատամարտն է պատկերված, բայց պատկերված է ընդհանրացման այնպիսի ուժով, որ նկարը վերանալով կոնկրետ իրադարձությունից, խորհրդանշական իմաստ է ստանում ու ամենայն իրավամբ կարող էր կոչվել «Պատմություն հայոց»... Ընդհանրացման այդ ուժը գալիս է հուշելու, որ հայ ժողովրդի բազմադարյան պատմությունը սկզբից մինչև մեր ոչ հեռավոր անցյալը մի համատարած ու անընդմեջ Ավարայր է եղել... Արյան Ավարայր, գաղափարի ու հավատի Ավարայր, մտքի ու ստեղծագործական թռիչքի Ավարայր... Եվ իզուր չէ, որ ցուցահանդեսի այցելուները, ենթարկվելով նկարչի ընդհանրացման ուժին, նկարի մեջ ոչ միայն Ավարայրի ճակատամարտի մասնակիցներին են տեսնում, այլև որոնում են տարբեր ժամանակներում ապրած պատմական դեմքեր: Որոնում են ու գտնում: Գտնում զորավարների ու գործիչների, պատմիչների ու բանաստեղծների, գիտնականների ու տաղերգուների, գտնում են Խորենացուն ու Նարեկացուն, Քուչակին ու Աբովյանին, Կոմիտասին ու Չարենցին, Սարյանին ու Սարոյանին...

Ավարայրի ճակատամարտն, այո, տևել է դարեր ու դարեր, Նարեկացին է իր «Մատյան ողբերգությամբ» մասնակցել այդ ճակատամարտին, Աբովյանն է մասնակցել իր «Վերք Հայաստանի»-ով, Չարենցը՝ խելագարված ամբոխների երգով, Սարոյանը՝ աշխարհասփյուռ հայության զանգվածների միջով քայլելով ու հորդորելով. «Ուր որ

երթաս, պոռա՝ հայ եմ»... Եվ այս կապակցությամբ դարձյալ պիտի խոսել նկարչի ընդհանրացման, անսովոր ուժի ու կերպավորման բարձր արվեստի մասին: Եթե ցուցահանդեսի այցելուները Կոմիտասին ու Չարենցին, Սարյանին ու Սարոյանին հնարավորություն ունեն ճանաչելու և գտնելու դիմանկարային նմանությամբ, որ ակնարկված է անքող, ապա Խորենացուն ու Նարեկացուն ճանաչում ու գտնում են նկարչի ընդհանրացման ուժի ու կերպավորման արվեստի օգնությամբ: Հայ գեղանկարչության համար այս աննախադեպ բազմակերպար ստեղծագործության կերպարներից յուրաքանչյուրը զարմանալիորեն անհատականացված է, ունի կենսագրություն, հոգեբանություն, բնավորություն, անուն, ազգանուն: Նրանցից յուրաքանչյուրն այնքան է հավաստի, այնքան իրական, որ այդ միակամ ու միաձույլ գնդից առանձնանալով, ձեռք է պարզում մեզ, զրույցի նստում մեզ հետ:

Դա արվեստի մեծ ուժի մասին է խոսում: Այդ մասին է խոսում նաև այն, որ կանգնելով նկարի դեմ, մոռանում ես, թե այս գործի ստեղծմանը մասնակցել է նկարչի անզուգական վարպետությունն ու տեխնիկան: Մոռանում ես գեղանկարչության հետ կապված այլևայլ մանրամասներ, որովհետև քո դեմ հառնում է ինքը՝ նորին մեծություն Ներդաշնակությունը, իսկական արվեստի այդ առաջին նախապայմաններից մեկը:

Բայց այսպես տաք-տաք իսկապես հնարավոր չէ քիչ թե շատ սպառիչ խոսք ասել այս մոնումենտալ վիթխարի գործերի մասին: Հավանաբար հետագայում արվեստաբանները մանրամասն զննության ենթարկելով մեր գեղանկարչության այդ զույգ գլուխգործոցները, գիտականորեն բացահայտեն նրանց գեղարվեստական ու գաղափարական հարուստ շերտերը, նշեն նրանց դերը մեր գեղանկարչության այսօրվա ու ապագայի համար:

Իսկ այժմ ասենք միայն, որ ստեղծագործական այս մեծ թռիչքը ամենևին էլ անսպասելի չէր մեր գեղանկարչության հիանալի վարպետի, մեր ժողովրդական նկարչի համար, որ դա արդյունք է տարիների գեղարվեստական մեծ կուտակումների ու նաև այն ազնիվ աշխատասիրության, որ նրա ուղեկիցն է եղել ի սկզբանե: Ասենք նաև, որ այս երկու ճակատամարտերի (տառերի գյուտն էլ է ճակատամարտ, այն էլ ի՜նչ ճակատամարտ) գեղարվեստական մարմնավորումներով շահված է արվեստի մի իսկական ճակատամարտ, մեր գեղանկարչության մեջ բացված է երկու «անշրջանակ լուսամուտ», որոնց լույսը մեծախոհրհուրդ է ու հեռագնա...